

ԾԱՂԻԿ շարաթը երկու անգամ կը հրատարակուի Զորեք-շարթի եւ Շարաթ օրերն : — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 400 դրուշ պրծաթ : — Վեցամեայն 50 . — Գաւառաց համար 115 դրուշ : — Վեցամեայ 60 . — Երեսուցամեան տողը 5 դրուշ :



Որ եւ է նախնի կամ գրութիւն պէտք է ուզել :

Ա. Արաօնատեր և Տնօրէն

ԽԱՆՏՈՆ ՍԱԲԱՅԱՆ

Էսկի Զապիթի Ժառանգի Նշան էՖ. Պէրպէրեանի Տպարան :

Խմբագրութեան յանձնաժողովի անդամներն են :

40 ՓԱՐԱ

ՀԱՆԴԵՍ

ՓԱՐԱ 40



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային տեսութիւն. (Ընդհանուր եզրակացութիւնը). — Զեկոյցը : — Ասկէ անկէ : — Էվ-ճիմէնիք : — Կանացի դեղ : — Ժողովրդային առողջապահութիւն. — (Կանայք աշխատանոցներու մէջ) : — Առտնին խրատներ : — Սարեաթի խնդիրը (վերջ) : — Տիկին Բանդալօն (վրպաստութիւն)

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Նախընթաց յօդուածով աւարտեցինք Աղլկանց Դաստիարակութեան նկատմամբ մեր կարծիքը, որով կամբողջանան արու և աղջիկ տղայոց դաստիարակութեան մասին մեր տեսութիւնները, որոց նպատակն է խնամել նախակրթութիւնն ընդհանրացնել՝ առանց բեռնաւորելու կարգ մ'աւելորդ աշխատանքով, որ մինչեւ հիմա դրական և ոչ մի օգուտ ընծայելէ զատ : — Թո՛ղ չափազանց չհամարուի՝ յաւակնոտներ և թերուս իմաստակներ և եթ աւելցնելու նպատեցին :

Բայց երբէք չկարծուի թէ մենք միայն խնամել նախակրթութիւնն հանրացնելը բաւական կը համարինք կրթութեան գործին :

Եթէ կան այնպէս կարծողներ, նորա անշուշտ ըմբռնած լինելու չեն մեր յօդուածոց ոգին և կամ մոռցած լինելու են, որովհետեւ մենք երբէք ու-

րացած չենք նաեւ երկրորդական վարժարանաց և բարձրագոյն կրթութեան պէտքը, որ կարեւորութիւնը խոստովանած ենք ի շարս մեր յօդուածոց՝ յարելով ոսկայն և մատնանիշ ընելով թէ չէ կարելի մէյմէկ ուսումնարանի ձեւ տալ այն ամեն յարկերու՝ որ դըպրոց կամ վարժարան անունը կրեն :

Այս տեսակ յուր գրութիւն մ'արդէն ինքնին անգործադրելի է, որոյ օրինակը զարգացեալ ազգաց և ոչ միայն կրթական ծրագրին մէջ կը տեսնուի :

Ուզելով այլ եւս վերջ տալ մեր այդ յօդուածոց՝ կուգանք ընդհանուր եզրակացութեան :

Ա. Որովհետեւ խնդիրը կրթութեան կամ ազգային դաստիարակութեան վրայ է, պէտք կ'ըլլայ նախ ուշադրութիւն դարձնել Ծառիկ կոչուած ողբալի յարկերու վրայ, որ, հազիւ փոքր ինչ բացառութեամբ ամեն տեղ վարպետութեան զբաղման գրութեամբ կ'ընթանան տակաւին, և մատղաշ տղոց համար կարծես դատապարտեալի մէյմէկ վայրեր են. ուր բոլորովին կը խանգարի տղուն առողջական վիճակը, աշնան տեղեկներու նման կը խամրի անոր առողջութիւնն ու զուարթութիւնը և կրթութիւնը իրեն համար բոլորովին տհաճելի ու ձանձրալի կը դառնայ, մինչդեռ դպրոցը՝ Ծառիկոցն սկսեալ պէտք է սիրելի ընծայել տըղուն իր խիտ մատաղ հասակէն՝ լուրջ

խնամք տանելով անոր ֆիզիքական վիճակին, պահելով անոր առողջութիւնն ու զուարթութիւնը և իւր հասակին ու կարողութեան համեմատ՝ խաղու միջոցաւ սորվեցնելով որ ինչ պէտք է :

Տեղն է աստ որ յանուն մարդկութեան ցաւ յայտնենք նաեւ նեղ, բոլորովին խոնաւ և վատառույժ փողոցներու մէջ իբր դպրոց բացուած տուններու, յորս բաւական ծնողք խիստ անգթօրէն կը շրջեն 3-4 տարեկան փոքրիկ տղաքներ, որոնց յաշխարհ գալըն այդ անսիրտ ու անոգի ծնողաց դուցէ բեռ մ'ըլլալով՝ կուղեն իրենց դրամովը կենդանւոյն թունաւորել այն անմեղ մանկիկները, որ նոյն իսկ ապագայ են :

Բայց ո՛րի ըսել և որո՞ւ հասկցնել այս ամենը. դժբաղդաբար բաղումք ծնող եղած են՝ առանց սակայն գէթ ծնողական խիստ տարրական պարտականութիւնները գիտնալու :

Մեր կարգ մը Պատ. Թաղական խորհրդո՞ց հասկցնել, սակայն արի տես որ անոնք ալ իրենց փառասիրութիւնն և եթ յագեցնելու կոչուած են, վասն զի կուղեն և կը փափագին որ իրենց վարժարան աշխատանքով լի ծըրագրով ընթանայ, ամեն դպրոցական տարեշրջանի խառն քննութիւններ տրուին, ամառուան տաքուն 5—6 ժամ տեւողութեամբ ամենաձանձրալի մըրցանակաբաշխութեան հանդէս տեղի

ունենայ, առաջին քննիչը ներքոյն և ազգային լրագիրք գովեստից սինակներ լեցնեն, և ծնողք ալ տեսնելով այս ամեն արտաքին փայլ ու երեւոյթ՝ առանց սակայն բուն ներքինը թափանցելու՝ փորձուին կարծել թէ իւրեանց զաւկներ բան կը սորվին, մինչդեռ ի բաց տուեալ Գատը-քէօյի Արամեան, Պէշիկ-թաշի Մաքրուհեան, Իւսկիւտարի Ս. Խաչ և Սամաթիոյ Ս. Սահակեան վարժարանք մնացեալները՝ գրեթէ առանց բացառութեան վարժարան կոչուելու արժանիքը չունին թէպէտեւ այդ ամենուն համար ամեն տարի մեծագումար ծախքեր կը լլան:

Անշուշտ աւելի լաւ և խիստ օգտակար կ'ըլլայոր այդ անպետ ու աւելորդ ծախքերէ մաս մը զեղչուին և յատկանան կազմելու համար իւրաքանչիւր թաղի մէջ մէյմէկ օրինաւոր Մաղկոց կամ Մանկական Պարտէզ՝ ոյր վասն թոշակ ստանալով կարող ծնողքներէ որ վարպետութեան դպրոց կամ ծաղկոց կոչուած սպանդանոցներու արդէն դուստր մը կուտան ամեն շաբաթ:

Բ. Փոխանակ ամեն թաղային դպրոցի վարժարանական գոյն ու ձեւ տալու յաւակնութեան, որոյ անարդիւնաբերութիւնը բացայայտ է, լաւագոյն է վերածել մէյմէկ օրինաւոր և բարեկազմ նախակրթարանի՝ հետեւելով արդի յարգելի Ուսումն. խորհրդոյ ծրագրին՝ և տալով մի այնպիսի դաստիարակութիւն, որ յարմար գայ արհեստաւոր դասու ժողովրդեան զաւակաց, քսել կուզենք՝ արհեստաւորի դաստիարակութիւն և ոյժ տալով միանգամայն աղջկանց վարժարանի ուսանողութեանց առտնին տնտեսութեան և արհեստագործական ճիւղերուն. որոց մասին արդէն խօսեցանք յընթացք մեր յօդուածոց:

Գ. Գլխաւոր թաղերու մէջ, որպէս ի հասքէօյ, Բերայ, (Պէշիկթաշ ունի), Օրթաքէօյ, (Գատըքիւղ և Իւսկիւտար Ս. Խաչ և Սամաթիա արդէն կան) Գում-գափու և Պալատ հաստատել մէյմէկ երկրորդական կամ կեդրոնական վարժարան, պայմանաւ որ այդ երկրորդական կամ կեդրոնական վարժարանը ունենան նաեւ մէյմէկ նախակրթարաններ՝ փոքր ինչ տարբեր ծր

րագրով, որ պարունակէ բացի թուրքերէնէ՝ ֆրանսական լեզու(1), որ ծառայէ թէ իբր նախապատրաստական կեդրոնականին և թէ այն աշակերտք որ պիտի պարապին մեքենագործութեան և կամ այնպիսի արհեստներու՝ որոց համար անհրաժեշտ է որ ունենան եւրոպական լեզուի մը գէթ ծանօթութիւնը, այսինքն, գոնէ կարդացածն հասկնալ:

Բայց այդ նախակրթարանք պէտք չէ աւելնել խիստ յոռի և բոլորովին անպատասխանատու՝ դրութեամբ կառավարուին. որպէս կը կառավարուին այժմ, այլ միօրինակ դրութեամբ, որ պէս կը պահանջէ գաղափարաց միութեան հարկը:

Խնդիրն յայտնի է թէ ծրագրի վրայ է. երբ իւրաքանչիւր նախակրթարան իրարմէ յոյժ տարբեր ծրագրերով ու դաստիարակութեան բոլորովին տարբեր ուղղութիւններով կառավարուի և ընթանայ, ի հարկէ—բարոյական տեսակէտով— չկրնար այնքան օգտակար ըլլալ նկատմամբ գաղափարաց միութեան, և այդ բանի մէջ—կատարեալ լրջութեամբ խորհելով— չենք կարծեր թէ բարոյական ազատութեան դէմ կէտ մը գտնուի:

Թողունք Գերմանացին. Անգղիացին, և ուրիշ շատ զարգացեալ ազգեր. այլ օրինակ առնունք Թուրքը, Յոյնը և Հրեան, որ կը խորհին միշտ իբր թուրք, յոյն կամ հրեայ, են ծննդեամբ և այլ ամեն պարագայիւր թուրք, յոյն կամ հրեայ են, ուրեմն Հայը ինչո՞ւ բացառութիւն կազմէ, մինչդեռ Վեհ. Սուլթանի լուսամտութեան շնորհիւ Հայն ալ կը վայելէ իւր ազգային կրթութեան բարիքը, այսինքն, նախ մարդ ծնելէ յետոյ՝ ազգաւ լինել Հայ և հը պատակութեամբ՝ Օսմանցի:

Այս բան էապէս շատ կարեւոր է մանաւանդ անոր համար որ, օտարաժողութեան ոգին ի բաց կը վանի, այն օտարաժողութեան կ'ըսենք, որ անշուշտ բացարձակ չարիք մ'է,

Գ. Իսկ գալով երկրորդական կամ կեդրոնական վարժարանաց, ըստ մեր կարծեան, աւելի օգտակար է որ իւրեանց ծրագիրք պարունակեն թուրքեր

րէնէ և մէկերկու եւրոպական լեզուներէ զատ՝ գլխաւորաբար գիտական ճիւղեր. որ պէտքի տղան յետ ընթացաւարտ լինելու՝ եթէ միջոց չունենայ կամ ժամանակը չներէ տէրութեան բարձրագոյն վարժարաններէ մին մըտնելու գէթ ապրուստի միջոց մը կարենայ ձեռք բերել:

Երկրորդական կամ կեդրոնական վարժարանք կրնան նաեւ ըստ տեղւոյն երկսեռ ըլլալ. և կարողութիւն ընդունակութիւն ու յարմարութիւն ունեցող աշակերտութիւնը կարենան խնամեալ նախակրթութենէ զատ՝ նաեւ բարձր կրթութիւն ըստանալ, սակայն ուշ դնելով միշտ սասկզբունքին թէ ուսուցանել չէ թէ ինչ որ կարեւոր է Հայ-իգական պերճ դասուն, կամ միջնակարգ ընտանեաց, այլ ինչ որ անհրաժեշտապէս պէտք է կնոջ՝ մօր և տանտիկնոջ:

Ահաւասիկ եզրակացութիւնք մեր այն կարգ մը յօդուածոց, որոնց համար զմեզ անշուշտ պիտի չդատապարտեն իբր յետադիմական կարծեաց կամ գաղափարի տէր օք. և եթէ այնպէս խորհողներ իսկ գտնուին, մեզի երբէք հոգ կամ փոյթ չենք ընել, վասն զի մենք վայրկեան մ'իսկ մեր մտքէն չենք անցնել թէ այլք ինչ կը խորհին մեր վրայ կամ ինչ դատաւարան կ'ընեն. այլ մեր փափազն՝ ինչպէս և հրապարակագրի պարտքն է ջանալ միշտ հասարակաց օգտին և բարւոյն ծառայել, յորում է և մեր շահը:

Ուրիշ յօդուածով մ'ալ գաւառական վարժարանաց մասին պիտի խօսինք:

ՁեկՈՅԾ

Գլխու անհանգստութեան պատճառաւ այսօր չենք կրցած շարունակել Գրադատական և ուրիշ յօդուածներ, զոր խոստացած էինք:



Շիք միւսիւնիւն պիտի գաղինօնուն պիտինտէ, պիտ չիչէ բագը սըմարլայըպ իչտիքտէն սօղրա՝ կարսօնու չաղըրըպ տէտի,

(1) Որ կրնայ մշակուիլ նաեւ վարժարանէ գուրս, եթէ պէտք չգաջուի:

—Պաքսանա, կարսոն, ուզոն պոյ-
լու թըքնազճա պիր առամ կէլիպ պէ-
նի սորաճաք, կէլիրսէ օթուրսուն, պիր
չէլրէքտէն կէլէճէլիմ:

—Պաշ իւսթիւնէ . . . բագը բա-
րասընը ունութտունը:

—Կէլտիղիմտէ վէրիւրիմ:

—Էօյլէ իսէ օիզի արաեան առամ
կէլիրսէ, կիթտի արթըք կէլվէզ տէ-
յիմ,

* *

Ձէմպէրլի թաշըն էօնիւնտէ կէլիճի
ատէմին պիրի օրալարտա տուրան տի-
կէր պիր առէմէ սօրտու,

—Եսհու պիրատէր, Ագսարաեա
նէրտէն կիտիւրի:

—Պէօյլէճէ տօղրու տօղրուեա կիթ,

—Մաշալաճ, տօղրու կիտէյիմտէ
աճ գալալըմ, էօյլէճ մի:

* *

Անոջ և բժշկի մը միջեւ:

—Միւսիւ Տօքթօր, սիրտս շատ կը
նեղանայ այս բանին դարման մը չէ
կարելի գտնել:

—Սրտերնիդ կը նեղանայ, ուրե-
մըն օգտուեցէք բնութեանն:

—Ի՞նչպէս:

—Ճամբորդութեան ելէք:

—Ի՞նչ օգուտ ունի ճամբորդու-
թիւնը, քանի որ էրիկս ալ հետս պի-
տի ըլլայ:

* *

Սենեկի մը մէջ պառկող երկու բա-
րեկամներ:

—Մ. . . Աղա, Մ. . . աղա:

—Էյ, ի՞նչ կայ. ինչո՞ւ կը պօռաս:

—Կը քնանամ կոր:

—Ի՞նչէն կը հարցնես:

—Քեզմէ մէճիտիյէ մը փոխ պիտի
ուզէի տէ . . .:

—Հիմայ կը քնանամ կոր:

* *

Դասարանի մը մէջ:

—Պարոն, կրնա՞ք ըսել ինձ թէ՛
Նոյեան տապանը ձիթենույ ճիւղ բե-
րող աղանին արո՞ւ էր թէ էգ:

—Անպատճառ արու ըլլալու է
վարժապետ, որովհետեւ եթէ էգ լի-
նէր, անկարելի պիտի ըլլար նմա երկար
ատեն գոց պահել իւր բերանը:

* *

Տգեղ և միանգամայն տխմար մարդ
մը փողոցէն անցած ատենը գետինը

հայելւոյ կտոր մը աեմեկով վեր կառ-
նէ և անոր մէջ իւր դէմքը դիտելէ
վերջ կ'ըսէ:

—Աս ի՞նչ տգեղ դէմքէ, վայրա-
պար չէ որ զինքը ասանկ փողոցը նե-
տեր են:

ԷՎՃԻՄԵՆԼԻՔ

Պիր առէմին խանէսի տէրունիւնտէ
պիր էվճիմէն գատըն պուլունմասը օ
խանէի ապատ ու էհեա իտէր. զիրա
պիր էրքէք հէր նէ տէրէճէ թասար-
րուֆա ըայէթ իթսէ, եինէ պիր գա-
տընըն իտարէսինաէն կէօրէճէկի մու-
հասէնաթա տէսթրէս օլամազ. մա-
ղալու թաալէա, ագսիսինտէն տախի
րապպիմ էսիրկէսին ալէմի. Հէլէ պա-
ղը գատընլարըն սախթէ էվճիմէնիք-
լէրի իսէ կիրտաղը սէֆալէթին մու-
յինի տիրէր:

Իշթէ պու գապիլտէն օլարաք պիր
գէվճուղէվճէ մապէյինտէ տէվէրան
իտէն՝ աթիտէքի միւքեալէմէի տէր-
միյան էտէլիմ:

—Տիւն կիւնտիւղիւն ամեամ վի-
ղիթաեա կէլտի. առըմտան եէրինտի-
պինէ կէչէճէլիտիմ:

—Նէյէ, նէ վարըմըլ քի:

—Իգրամ էտէճէք հիչ պիր չէյ եօ-
ղըտը քի իգրամ էտէլիմ:

—Ձօք չէյ . . . գահվէ բիշիթմէ-
տին մի:

—Ձայէր եալընըլ գահվէ իլէ օ-
լուր, պէրէքեաթ վէրսին շաբկամ իչին
սէնտէն իքի լիրա ալտըմ ամա պէն
շաբկալը պիր լիրաեա եաբտըրտըմ տա
պիր լիրաեա իքօնօմի էտիպ սաքլա-
մըլըտըմ, չափըճակ ուշաղը կէօնտէր-
տիմ Լը Պօնտան մառօն կլասէ իլէ
գիւրասօ կէթիթիթիմ:

—Վայ կիտի իտարէ վայ, էյպու
սէնին իքօնօմիյանտան պէնիմ գէսէմէ
պիր ֆայտա:

—Տահա նէ ֆայտա իստէրսին, մա-
ռօն կլասէի ալմասամ օլաճաք քիւ-
չիւքիւլիւ պիր կէօղիւնիւն էօնիւնէ
կէթիթ:

—Վայ, վայ, վայ. հէմէն ամեանտա
մառօն կլասէ եէմէյի վէրէյիտի:

—Նէտէրլէրսէ տէսինլէր: պէնիմ
էթրաֆըմտանպիրի կէլտիմի, կէօղիւ-

նէ թիքէն օլուրլար, տմա սէնին էթ-
րաֆընտան պիրի կէլտիմի՝ աեաքլարըն
եէրտէն քէսիլիր, նէ իգրամլար էտէ-
ճիլինի շաշըրըրսըն:

—Վաղիֆէ պիլէ էթմէմ միսա-
ֆիր կէլիր, նէ պուլուրսա օտա եէր
պէնտէ եէրիմ, իշտէ պու:

—Հէլէ պաք նասըլ ինքեարա չը-
քըլտը. կէչէն հաֆթա պառպանըն մա-
տամը կէլտի իսէ նէ իքրամլար էտէ-
ճէլինի պիլմէտին, սուֆրատա բալա-
մուտ պալըքլարը՝ մը տէրսին, թուրք
սալադալարը՝ մը հանկը պիրինի սէօյ-
լէլիմ:

—Պու տէտիլին իգրամլարըն ա-
լայը պէշ զրուշլուգ լագըրտը տըր.
սէնինքի էօյլէճի եա, պիր օգկայ մա-
ռօն կլասէ ալթմըլ զրուշա տըր:

—Սանա՝ նէ, սէն պիր բարա վէր-
տին, պէն իքօնօմի էթտիլիմ լիրատան
ալտըրտըմ:

—Պագընտը շունա, պիր լիրա եէ-
րինէ իքի լիրա ալմըլտա, պիրտէ իքօ-
նօմի էթտիմ տիլէ էօյլինիւեօր:

—Էօյլինիւրիւմ եա, պէնիմ կիպի
էվճիմէն գըթ պուլուրսուն, ախ պիր
իսրաֆճը գարըեա տիւշմէլի իտին քի
օ վագըթ հալինի կէօրէյիտիմ:

—Իշտէ չիմտիքի հալիմէ պաք,
կէօրիւրսին:

—Քա պու նէ թալէհսիղիմ, քըրք
եըլըն պաշընտա ամեամ պիր վիղի-
թաեա կէլտի, կէօղիւնէ թիքէն օլ-
տու: հէմէն պաշըմը ալըպ մամա մա
կիտէլիմ:

—Ալ սանա պիր մէսարիֆ տահա . . .
տահա սէքիլ կիւն օլմատը համամա
կիտէլի:

—Օրթալըղը աշտարակա չէվիր քի
գապահաթըն էօրթիւրսին. շու եա-
նըմըղաաքի եէնի էվլի գօմշումըղըն
իւղէրինէ պագարըմտա հայրան օլու-
րում, պիր պիրլէրինի գօքլարլար. գա-
րըսընըն աղղընտան նէ չըքարսա հէմէն
օ թագկէ ալընաճաք:

—Օնուն գօքրուսու սօղրա չըքար,
ալթը այ կէչսին, օնլարընտա նարկընը
ալըրըմ:

—Նէ ալըրսըն պէնտէ պիլմէմ գա-
րըսընըն իւսթիւնէ չէօյլէ պալըլըր.
այտա պիր եէնի գօսթիւմ եաբտըրըր.
բէք էյի տէ եաբար, հէր քէս պէնիմ
կիպի խենդ տէյիլ քի իքօնօմի իլէ

սէքիզ լիւրա թօբլասըն, աղասընա ա-
ղըրլըք վերմէտէն գօսթիւմ եարտըր-
սըն:

—Մաշալլա՛հ. հիշ աղըրլըք վեր-
տին քի. հաստալըմ տէտին օն պէշ
կիւն տէ սէքիզ լիւրա հէքիմ բարասը
ալտըն. պիւրտէ իքօնօմի էթմիշ իմիշ-
տէ գօսթիւմ եարտըրմըշ:

—Հէքիմէ վերմէտիմ սաքլատըմ.
Ֆէնա՛մըէթտիմ, պագ շունա, էվճիմէն-
լիքաէ եարամաեօր:

—Հայ եէրէ պաթսըն պէօլլէ էվ-
ճիմէնլիք, պիզիմ քէսէտէն բարալար
կիտէյօր, ալըն կէօրիւն մատամըմըզ էվ-
ճիմէն իմիշ:

—Պէյէնմէտին իսէ պէօլլիւնտէն
թէզի եսք անամա կիտէթիմ:

—Իստէտիզին եէրէ կիտէպիլի-
սին. պէնտէ պիր սաաթ էվէլ տըշա-
րը տիւշէիմ տէյէրէք, էվտէն տի-
շարը չըքտը:

Իշթէ պու գապիլտէն օլան էվճի-
մէն գատընլար պիլմէլի տիրէր քի էվ-
ճիմէնլիք տիյէ պիլտիքլէրի սըրֆ մուս-
րիֆլիք տիր:

Յ. Մ. Հ.

ԿԱՆԱՅԻ ԴԵՂ

Հայտէ էլ մարդ. . . տուռն է, քիշ
մը կնա պաց:

—Ո՛վ կրնայ ըլլալ աս վախիթ,
մէյմը ասորկէ նայելու է. (պատուհան
մը բանալով) ո՛վ է ան:

—Մեղայ քի ո՛վ է, պա՛ց իշտէ
Թէպէր տուն էմ:

—Հէյ Ալլահ մուսղահադընը վեր-
մէսին սէնին ա՛ գարը՝ կէճէնին եա-
րըսընտա՛ մը եօլա չըգմըշ կէլմիշ պու-
քա աղջիկ, կնա պա՛ց տուռը, Թէպէրն
է:

—Պարի լուս ծեղ. քա աշվընիտ
խաղայ. կերեւայ քի տահա պառկեր
են ասոնք:

—Ճանըմ Թէպէր տուտու, իրաւօր
բէք խօշ կնիկ ես, քա աս վախիթ ին-
տոր ալ ճամբաներէն չի վախցար:

—Ի՛նչ կայ վախնալու, հէ՛մ ի՛նչ
կայ շաշմիշներ ըլլալու ասանկ քիշ մը
կանուկակէկ գայու համար, հէյ եավ-
րում հէյ. . . տահա Թէպէրն պէօ-
ճէյի էօլմէմիշ տիր իշէրիսինտէ:

—Աղէկ կըսես ամա՛ լուսուն տա-

հա չորս սահաթ կայ պէսպէլլի լու-
սինկային լուսին խաբուեր ճամբայ ե-
լեր եօ:

—Պէհանըմ նիշո՛ւն ուզատըյօրսըն
լաֆը, օթո՛ւր քա Թէպէր տուտու,
պաց սա մանկալը ծառքսվդ խախվէ
մը էվէ, կուզես նէ հատ մըն ալ ին-
ծի էվէ. տուն անոր մի՛ նայէր:

—Հոպա որի՛ն նայիմ, անլըման,
քեզի՛. մարեր էմ. . . Բա Արուս, ին-
տորը էղաւ չօճուխը, էս սաղլամ ա-
նոր համար էկայ:

—Ինտոր չես ուզեր անանկ է, սա-
լըխած իլաններդ հիշ ֆայտա մը չը-
րին:

—Մեղա՛յ քի չըրին, կառաւուն հատ
արբայով անիսօնը խաշեցիր խմցուցի՛ր.
եասը քիմեօնին թիւթսիւին պոնեցի՛ր:

—Ամենական թիւթսիւսիւիւրը ըրի:

—Խապիլ է, վո՛ւր է չօճուխը:

—Վերը՝ թէյզէին օտան պառկեր
է:

—Մէյմը օլսուն տեսնալու էմ
(Վեր կէլնէն):

Թէպէր ձեռքը տղուն ճակտին վը-
րայ կը դնէ, ձեռուները և ոտներնե-
րը կը բռնէ:

—Աման կամացուկ, գէրէ տահա
նոր քունը տարաւ կըսէ մօրաքօյրը
գրեթէ լալով. ինչուկ աս սահաթս
չախէշուխ էր:

—Հոգ մի՛ ընէք, պանիկ մը չիկայ,
էս անոր պաշտայ իլաններ սայքըն պի-
տի տամ հիմայ. տահա տուք պան չէ՛ք
տեսեր, Թուանս Բուրուլին մատին
տօլաման ըռընտճընողը աս մեղաւորտ
էր էվէ Ալլահ:

—Հա՛ ամա քուրուկ, ասոր հի-
ւանտուլինը մատի տօլամա չէ. . . ես
չիյտեմ անանկ պան, յարեց մօրաքոյ-
րը հեծկտանօք, ասոր ի՛նչ կըլլայ ըլ-
լայ՝ հէքիմ մը պիտի պերուի. գաւակիս
ծառքէ կելլայ կոր:

(Տղայն կարթննայ)

—Ո՛հ, վար կորսնցուցէք քովէս սա
կնիկը. չը գիտէ՛ք քի ես քնացեր էի,
նորէն իլաճ ընելու եկեր է. . . Թէյ-
զէ, հոգիդ սիրես թէզ սըվօնք ել վար
վոնտէ, հէ՛մ մէյմալ մի թողուր որքօ-
վըս մօտենան:

Մօրաքօյրը տղուն այս ալաշանաց
վրայ ոտք կէնէ և փառաւորապէս
երկուքն ի միասին, վար կը վոնտէ և
յետոյ հիւանդին քով երթալով դա-

ւակս, կըսէ, տուն հոգ մի՛ ըներ, ես
ասոր շնորհքով հէքիմի մը քեզի նա-
յել կուտամ:

—Հաւնեցա՛ր հիմայ, Արուս, գէմա-
նէ էվլատլարը կըսեն նէ՛ սանքի հախ
ունին կըսէ Թէպէր, գլխուն ֆօթալը
շտկելով, իոր աճապարանօք սանդու-
խէն վար իջած ժամանակ տակն ու-
վրայ եղած էր, թէյզէն ալ տղուն
խելքէն է, հաւնած հէքիմը թող պերէ
ինչուկ մեռցնեն նէ:

—Թող պերէ ի՛նչ ընեմ, դաւակը
մինակ քուկդ չէ, իմս ալ է կըսէ կոր.
ի՛նչ կրնամ ընել:

—Էօլլէ ամա, հէքիմներն էին տը-
ղան ատ հալը ձըգողը, վախ իվրատ ախ-
ճիկ:

—Շիտակ է ըսածդ ամա, էկուր
տէ լախըրար հասկցուր:

—Հիմաճուկ ինծի օր մնար նէ՛ կը-
սեմ, աս տղուն իլիմօնին թթուն բէ-
լինին հեռ կը տնէի աղւոր մը կըլտա-
չէի, տաքուկ տաքուկ կը խմցունէի,
խմցունելէս էտեւ օղուլ պալին փորին
փրայ աղւոր մը կը քսէի, վրան ալ
տառը ֆիլֆիլին թօղը կըցանէի. պ-
սոնք բնելէս սօղրամ, թօփլուին ծա-
րովը վրան օխտը հատ խալանֆիլ կը
բաթեցնէի. բիրի բաք կըլլար, ամա
վրըն՝ կը հասկըցունես քի, նա՛ թաշ,
նա պաշ, ան ուրուբային հէքիմները
աս պիշիմ հիւանտուլիններէն ի՛նչ էլ
հասնան քի:

—Բա՛ աֆէրիմ, Թէպէր տուտու,
ըսաւ Պաղտիկ աղան, սանա պունտան
պէօլլէ տօթթօր Թէպէր տէմէլի, գա-
բունուն իւստիւնտէ պիր տա եաֆտա
եափըշտըրմալը:

—Ձէֆկըդ առ տէ՛ Ափոստուլին մէ-
խանան կընա, ալլըման, օր ըլլայ սա-
հաթ ըլլայ Բուրուլըս տեսնաւ նէ՛ մա-
տին տօլաման վո՛վ աղէկցուց տէի
հարցուր հեզ մը՝ մինակ տո՛ն. . . Ա-
րուսեակ հանըմ տաքրոջս թուռ կայ,
ամա՛ն, ես ալ վիրայ կը մօռնամ անու-
նը. . .

—Էօթէ՛նը:

—Հա՛, հա՛ Ուրթէնը, ծունկին խա-
փախին վրայ սիվիլճիկ մը հաներ էր
օր առկոց առակին պանը, չերկնցնեմ
իրեք օրուան մէջ բիրի բաք ըրի՛ Տա-
հան կայ, պղտիկ Թուանս Պետիկին
պըզտի մատը փատ տաշեցնիքէն մէջը
խըյմըլմընէ մտեր, քա նայեցայ օր կը

ճուայ կոր հէմէն մենծ ախճիկիս կացի ճըմպըղը ուզեցի. անով խըյմըխը քաջեցի տուրս հանեցի :

— Բա պօշ տեղը սիրտիկդ մի հատ-ցուներ մարիկս. աշխարհքս ասանկ է, չիտե՞ս, էքսէրի շատ պան գիտծողին ծառքէն շատ պան էկողին երեքը չեն ուզեր նայիլ. հիմայ՝ ձգէ՛ տտոնք, ան-ցած օր աղճիկտեսի պիտի էրթայիք՝ կացիք :

— Տաքրօջս փեսին ամուսնային թո-ռանը :

— Հա հա, մէ շարեր :

— Կացինք հապա :

— Էյ նախքէ նայինք, ինտո՞ր տե-սաք ախճիկը :

— Նախքեմ, լուսը ճղքուեցաւ :

— Լուսնալով, իշտէ՛ աղէ՛կ ա :

— Աղէկ ամա, ասօր հարսիս ներօղը տղուն վարպետին ասնամօրը հետ կա-նուխ ժամ պիտի էրթանք, վաղը չէ մէկալնօր կուգամ աղւոր մը կը նախ-լէմ. էյ շինտիլիք մնաս պարով :

— Կերթա՞ն կոր, էրթաս պարով չիմօռնաս գաա :

Գ. Փ.

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Դ.

Կանայք աշխատանքներու մէջ

Մենք է թիւ այն վատառողջ ար-ուեստից յորս կանայք գլխաւոր դերը կը կատարեն : Իգաւան սեռը ունի իւր ներկայացուցիչներն աշխատանոց-ներու և գործարաններու մէջ, որք ի վնաս իրենց կենաց կը գործեն մարդ-կային ընկերութեան օգտակար լինե-լու համար : Կան արուեստներ որք կանանց յատուկ են, կանացի ձեռքը միայն կարող է կատարել զայնս :

Կինն ընտանեկան լարկէն դուրս կ'ենէ և կը մտնէ աշխատանքներու կեանքին մէջ. գարմանալի չէ այս. իւր փափուկ ձեռներն ո՛չ միայն վարժ են գործելու ընտանի յարկին խաղաղու-թեանը և երջանկութեանը համար : այլ նաեւ յաջողապէս կը կատարեն այնպիսի աշխատութիւններ՝ որոց վրայ միշտ կը հիանամք մեք և այսպէս նո-քա եւս բաժին մը կուենան ճարտա-րութեան մէջ : Այն թղթի կտորն ո-րոյ վրայ կը գրենք, այն կտաւն ուս-

կից մեր հանդերձներն կը շինենք, այն արուեստական ծաղիկներն որոցմով կը պնակազարդեն մեր կանայք իրենց գլխարկներն այն գոհարեղէն զարդերն զորս կը կրենք, այս ամենքն կանացի ձեռաց գործունէութեան արդիւնքն է մեծ մասամբ :

Իւր դժուարին աշխատութեանց մէջ, իւր յարատեւ գործունէութեան մէջ, հարկ է աշակցիլ կնոջ՝ թեթեւ-ցնելու համար իւր բեռն և դնելու համար իւր կեանքը առողջապահիկ կանոնաց ներքեւ, որպէս զի աղատ մնայ այն ալազան վտանգներէն, որք ամէն վայրկեան իրեն կ'օպասեն այն մթնոլորտին մէջ՝ ուր եկած է ինք աշ-խատելու և գործելու համար :

Ո՞րոնք են կանացի արուեստներն, Առանց խօսելու այն թղթի, բամպա-կի, կտաւի, և այլ գործարանաց վրայ որոց մէջ կինն ունի աշխատութեան գլխաւոր բաժինը, յիշատակենք այն գործերն միայն զորս կը կատարէ նա՝ և որք աւելի ծանօթ են մասամբ մը մեր կեանքին :

Լուացարար կանանց ամբողջ կար-ծեմ թէ՛ 30,000 գործաւորներէ կը բաղկանայ, ամենքն եւս օգտակար են մեզ և որոց ամէն օր կը դիմենք մեք առտնին կարգապահութեան և մաք-րութեան համար : Այն մթնոլորտն ուր կը գործեն նոքա, միշտ խոնաւ է և կենթարկէ զիրենք յօգացաւի և շքն-չառական անհանգստութեանց :

(Շարունակելի)

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ԽՐԱՏՆԵՐ

1. Առողջապահութեան աւաց.— Եթէ չա-փազանց աշխատութենէ մը վերջ աչ-քերնիդ յոգնին, երեկոյ և առաւօտ զով ջրով լուացէ՛ք և ջրոյն մէջ դրէ՛ք մի կամ երկու կաթիլ ասօնիտ : Դիւեր-ները երկար մի աշխատի՛ք և կառքի կամ նաւու մէջ մի կարդա՛ք :

2. Գլխու ցաւի դարձն.— Շատ մար-դիկ տաք բաղանիքներ մտնելէ վերջ գլխու ցաւի ենթակայ կը լինին որ նոյն օրը կը տեւէ և երբեմն դժուա-րաւ կը դարմանուի. Այդ անհանգս-տութենէն ազատ մնալու համար, բա-

ղանիքէն դուրս, պէտք է ձեռներն և գլուխն պաղ ջրով լաւ մը լուալ :

3. Զերմութեան յարաւելած անհանգստ-ւիւններ.— Երբեմն այնպէս կը պատահի որ սաստիկ տաք օդ եղած ժամանակ, պտոյտէ մը վերադառնալէդ վերջ բաւական զով սենեկի մը մէջ երբ մտ-նէ՛ք, մասնաւոր անհանգստութիւն մը կ'զգաք և գլխու պտոյտ մը կ'ունե-նաք : Այդ պարագային մէջ, լաւ է քիչ մը պաղ սուրճ խմել և ձեռներն ու դէմքը լուալ պաղ ջրով : Անհան-գստութիւնը անպատճառ անյայտ կը լինի :

4. Ստորոգնութեան վեր կախ ելէ՛.— Բը-ժիշկ մ'ըսած է թէ՛ սրտի հիւանդու-թեանց մեծագոյն մասը յառաջ կու-գայ բարձր յարկեր ելնելէ ու ստն-դուղներուն առտիճաններուն վրայէն արագ անցնելէ, և որ գլխաւոր պատ-ճառն է նաեւ բարախմանց : Այս ան-պատեհութեանց ի դարման, օտն-դուղէն կամաց ելնել և ո՛չ մէկ ան դամէն երկու աստիճան առնուլ : Քայ-լերն պէտք է որ կանոնաւոր լինին և տան մը վերի յարկը ելած ժամանա-նիդ, պէտք է որ արագ և զորաւոր կերպով չը շնչէ՛ք :

5. Ծաւէ անօթեպէս վերջ ձիւն.— Ծաւէ անօթեպէս վերջ, ծխամոլի մը առա-ջին գործն է կամ իւր գլանիկն և կամ ծխափողէն վառել : Յոռի սովորու-թիւն : Որովհետեւ ծխախոտը մարսո-ղական խոզովակներն կը տկարացնէ և մարսողութիւնը կը դժուարացնէ, ա-նզգալի կերպիւ և երկար ժամանակի մէջ, Պէտք է միջոց թողուլ ճաշին և այն ժամանակին միջեւ, զոր յատկացու-ցած ենք ծխախոտին քաղցր տպաւո-րութիւնները վայելելու համար :

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ՍԱՐԸԵԱՐԻ ԽՆԴԻՐԸ

ՕՐԹԱԶԷՇՄԷ ԶԲՕՍԱՎԱՅՐԻ ԵԿԱՄՈՒՏԸ

ԵՒ

ԵՆՆԻՄԱՀԱԼԼԷԻ ԴՊԸՈՅԸ

(Վերջընթիւր թուէն)

Նոյն նամակաց ներքեւ Գ. Համբար-ձումեան ստորագրութիւնը կ'երեւի :

Այս անձը տէօքմէճի Համբարձում

աղայի օրդին է, որ անցեալ տարուան արդիւնքէն 40|100 ոսկի իւր միջնորդութեամբը ու երաշխաւորութեամբը տոկոսի տրուած և իրմէ ալ հետեւեալ մուրհակն առնուած է .

Ահաւասիկ պատճէնը :

1889 մայիս 14ի հիմնադիր ժողովոյն մեծամասնութեամբ ըրած որոշման համեմատ՝ Օսկիհան էֆէնտի Պաղտասարեանի անուամբ փոխ առնուած եօթանասուն և չորս ոսկի և 40 դուրուշը (74|40|100) հիմնադիր ժողովը վստահեցնելու համար կ'երաշխաւորեմ հարկերին 9 տոկոսով վճարելու հարկ եղած ժամանակին :

Գալուստի Հաֆթըյոն-Քան

Յարեար-Եէնիմահալլէ

1889 Մայիս 14-46

Սոյն գործողութեան որոշումը հետեւեալ կերպիւ տրուած է :

Ահաւասիկ պատճէնը քաղեալ յատենագրութենէ .

«Յարութիւն էֆէնտի Սվանեանի քով գտնուած թէ թէաթրոյի և թէ Օրթա-չէշմէի հասոյթներն, որ կ'ընեն 206|90|100 լիրա օսմանեան որուն մէջէն 15 լիրա օսման որ տրուած է Թաղական խորհրդոյ Ատենապետ Պարապետ էֆէնտի Էգնայեանի և նաեւ 17 1|2 լիրա օսմանեան որ դանձուած է ապառիկներէն և նոյնպէս տրուած է Կարապետ էֆ. Էգնայեանի : մնացեալ 74|40|100 լիրա օսմանեան ընդհ. ժողովոյ յանձնած է, այն պայմանաւ որ այդ ստակը միմիայն դպրոցի համար հող գնուի, որուն տնօրէնութեանը համար ներկայ անգամը կ'ստորագրեն :

Ներկայ անգամոց ստորագր.

Յովհաննէս Մոստիչեան . Ա. Յ. Յընտրելեան . Գ. Յնտրգլեան . Գալուստ Համբարձումեան . Գառնիկ Համբարձումեան . Հայրապետ Ալաճաճեան . Բ. Բարսեղեան . Գաբրիէլ Արտպեան . Յովհաննէս Պասմաճեան . Գ. Մ. Պասմաճեան . վասն Պ. Գարակէօզեանի՝ Գալուստ Համբարձումեան . վասն Յարութիւն Կիւմիւշկէրտանեանի Գալուստ Համբարձումեան . Նիկողոս Սարգիսեան

Արդ. ինչպէս կ'երեւայ իշխալ որոշումէն անցեալ տարուան արդիւնքըն յատկացուած է դպրոցի համար գետին մը գնելու, բայց ինչպէս կ'ըլլայ որ Համբարձումեան էֆէնտի սոյն բացորոշ որոշման հակառակ՝ իւր միջ-

նորդութեամբն ստակը տոկոսի կուտայ. ինչպէս պէտք է բացատրել սոյն գործողութեան պատճառն, արդեօք գնելու յարմար գետին չկար. ո՛չ չկըրնար ըսուիլ, բայց ո՛ւր է և ինչ նըպատակի գործածուեցաւ 40 ոսկին :

Վիճակահանութեան նամակաց մէջ գրած էին թէ անցեալ տարի դըպրոցին մատակարարութեան համար ամսէ ամիս Կական զրուշի յատկացեալ տուրքն իբր թէ այս տարի չէ կրցեր հաւաքուիլ և ասոր ալ պատճառը իբր թէ մենք ենք եղեր, մինչդեռ մենք վեցամսեայն ամբողջովին կանխիկ վճարած ենք, զոր ստացած են մենք և ընկալագիրն ալ քովերնիս է, ինչպէ՛ս կ'ըլլայ ուրեմն որ մենք արդելք ու խոչընդոտ ըլլանք . բան մը, որ ճշմարտութեան հակառակ է.

Կեղրակացները, մենք ոչ թէ արգելք կ'ոմ խափանարար եղած ենք դպրոցի հաստատման և գետնի գրնման, այլ մերովսանն աշխատած ենք ամեն կերպով, ամեն առիթն և ամեն պարագայի մէջ, և զայս կը յայտարարարենք հրապարակաւ ոչ թէ ցուցամօլութեան համար, այլ միայն և եթ յայտնելու համար թէ կատարած ենք մեր պարտականութիւնն, հետեւաբար անտեղի և անհիմն է զմեզ իբր արգելք ցոյց տալու աշխատիլ, մինչդեռ բուն արգելք եղողներն անյայտ չեն, ինչպէս որ գործը կը խօսի, և դեռ դպրոցի համար գետին մը գնուած և շինութեան ձեռնարկուած չէ, որով ընկերութիւնն ամեն տարի դպրոցի համար վարձք տալու հարկին մէջ կը գտնուի :

Խնդրելով . . . Տէր որ ազգօգուտ թերթիդ մէջ բարեհաճիք հրատարակել ներկայս և ընդունիլ մեր շնորհակալեաց հաւաստիքը

15|27 օգոստ.

Մնամ

Սարեար

խորին յարգանքք

Յ. ՍվաճեԱն

Բ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

Եէնի մահալլէ

ԱՐՏՕՆԱՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ

ԱՆՏՕՆ ՍԱՔԱԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն Շ Ա Ն Պ Է Ր Պ Է Ռ Ե Ա Ն



ՌՈՒԲԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ո Ս Կ Ե Ր Ի 2-ժ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ

Բերա, հրապարակ թիւնէլէ Ըն- 519

Վաճառումն և նորոգութիւնք ոսկերչական նիւթոց և ժամացոյցի շքեթայի և այլն .

Ռուբէն Մելքոնեան և ընկ. պատիւ ունին ծանուցանել արգոյ հասարակութեան, թէ ի Բերա, Թիւնէլի հրապարակին վրայ Ոսկերչ-ժամացործի վաճառատուն մը բացած է, ուր ամեն տեսակ ոսկերչական նիւթեր, ժամացոյցներ շքեթայնի և այլն կը վաճառուին և կը նորոգուին դիւ ամատչելի պայմաններով և աժան գնով :

Ուստի կը յորդորենք ազնիւ յաճախորդներն որ անգամ մը այցելեն յիշեալ վաճառատուն, ապահով ըլլալով որ ամեն տեսակ գիւրութիւն և խնամք պիտի գտնեն նոյն վաճառատան մէջ :

ՂԱԳԱՄԻՄԻ ՂԱԳԱ

Կ Ա Ռ Ք Ե Ր Ո Ւ Վ Ե Ր Ա Ր Բ Ե Ր Ե Ա Ն Ա Պ Ր Ա Ն Ք Ե Ն Ե Ն Ե Ն

ԵՐԿԱՔ, ՊՐՂԱՍ, ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՆԵՐԿԵՐ

Ղալաթա Մահմուտիյէ փողոց թիւ 48

Սուլթան Մէհմետ Կեմալիյէ փողոց թիւ 36

Պ Օ Ղ Ի Ն

(ՀԱՄԴԻԲ)



ԱՆՐԱՇԱՆՈՐ ՆՈՐԹ ՊՐԻԹԻՇ ՐԻԳԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մեր յաճախորդներու փափաքանաց համաձայն, մեր այս տարուան քաուչուէ մուճակներն, որք իրենց վերայ ալ իբրեւ նշան կշիռ մը կը կրեն խիստ ճաշակաւոր, նուրբ և հաստատուն շինուած են կոպր թերթով:

Պօլսոյ հրապարակին վրայ երկարատեւէ ի վեր ճանչցուած է թէ մեր քաուչուէ մուճակները կը գերազանցեն քսան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները:

Մեր այս մուճակներու ներքին կողմը կշիռի մը և արտաքին կողմն ալ առիւծի մը պատկերը գործածուած է իբրեւ նշան: Կը վաճառուին ի Պօլիս Սուլթան Համամ աղբիւրի մօտ Սեպուհ աղա Տէմիրճեանի թիւ 47 և 49 խանութն և բոլոր քաուչուէ մուճակ վաճառողներու քով: Կեդրոնատեղին է ի Պօլիս, Պահճէ Գաբու, Գօճաման Օղլու խան, Ճօրճի Կիտրուի թիւ 14 մ/թերանոցը:

— 76 —

կորսնցուցած էր խաղու մէջ, կորսնցուցած չէր տակաւին օր մը խաղու մէջ երջանիկ ըլլալու յոյսը: Եւ եթէ հիմակ, դահլիճներու մէջ, խաղու սեղաններու առջեւ չէր երթար նստեր, պատճառն այն էր որ իր գրպանին մէջ կուտ մըն ալ չիկար, և շատ վշտահար էր որ խոշոր գումարներով չէր կրնար խաղալ, ինչպէս երբեմն:

Պ. Ֆուլեադ կերակուրի ժամանակ չորս հոգիի չափ կերաւ ու խմեց. չի մոռցաւ նաեւ ուսումնասիրել հարսին միամիտ բարեկամութեան ճաշակները, բնաւորութիւնները, սովորութիւնները: Ուստի նոյն իրիկունն իսկ սկսաւ գովել տիկին Էդուալտի ոտանաւորները, շնորհաւորել տիկին Վէսթլիսի արդուղարդներն ու դըշխոյաւայել ձեւերն, շողքորթել՝ Ուլմբիտի էրկան կուտած դէմքին որոշիչ հանգամանքն և վերջապէս դրուատել զՍաէզուին հնազանդեցընելու սովորութեան և իր էրկան վրայ ունեցած իշխանութեան համար:

Միայն տիկին Ֆլամպաուը չի համարձակեցաւ շնորհաւորել երեք էրիկ հինցուցած ըլլալուն համար, սակայն և այնպէս անոր առջեւ խոնարհութեամբ կը ծռէր, երբոր կ'անցնէր իր մօտէն:

Ատողք իր ձրէտէրիք բարեկամը ներկա-

ՖՕՐԹՈՒՆԱՅ

ԱՆՈՇԻՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ

ԳՈՒՄԲԱՆԵԱՍՈՐ

1668 րէ Պէրլէնի Բէկտի օլաւնաւ րոտ. 1745 րէ Տէմիրթի Բէկտի օլաւնաւ րոտ. 875,000 Ֆրանք

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 1,337,500

Տէրաատէթ բիաչաւընտա պիւրլէշիշ օլտն իշպու սիկուրթա գումբանեալարը. քէֆալէթի միւթէգապլիէ իլէ հէր նէվի էմթաա վէ ազլէ կրուբօլարընը, տէնիդ, նէհր վէ գարա նաղլիեաթը թէհլիքէլէրինէ գարըն չալէթլէ Փաեիտէպալիս շէրաեիթ էլէ սիկուրթա իտէրլէր:

ՏԻԻՍԷԼՏՈՐՓԷՐ

Տէնիք, Նէշր վէ ԳԱՐԱ

ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՈՐ

1745 րէ Տէմիրթի Բէկտի օլաւնաւ րոտ. 3.750,000 Ֆրանք

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 3,099,367. 15 Ֆր

ՀԱՆՁԷԱԹԻՇԷ

ԵԱՆՂԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՈՐ

1874 րէ Հապտի Բէկտի օլաւնաւ րոտ.

ՍԵՐՄԱՆԷ 3,750,000 Ֆրանք

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000

Իշպու սիկուրթա գումբանեալար, հէր նէվի էմլաք վէ շէաեը, անպար վէ մաղաաղա աէրուլէրինաէքի էմթաաեը, էն գիեատէ Փաեիտէպալիս շարթլար իլէ սիկուրթա իտէր: Թափիլի մալիւմաթ ալմադ իսթլիէնլէր, պալէատէ ղիքը օլունան իւշ գումբանեալարըն ումուճի մաւալաթ կիւզարը պուլունան իսթանպուլտա Պահլէ-Գաբու սունտա Բասիմ բաշա խանընտա նիւմէրօ 13 վէ 14 տէ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՓէն. տիեէ միւրաճաաթ իթմէկէ տալէթ օլունուր:

— 73 —

—Սա էրիկս անխելքին մէկն է եղեր որ պարահանդէսին հրաւիրեր է մարդ մը, որ կեանքին մէջ պարած չէ: Ի՞նչ կուզէ որ ընենք իր պարոն Տիւփաէլը, Ծաղրածու կերպարանք մը ունի, որ շատ անհաճոյ կ'երեւայ ինձ:

—Բայց եղբայրը շնորհքով տղայ մըն է:

—Դպրոցական մը, որ գեղձանիկի կը նմանի: Կը տեսնէ՞ք Պ. Ֆուլեադը, որ մօրեղբորս մէկ վաղեմի բարեկամին տղան է: Ահա ձեզ մարդ մը, որ սիրուելու տեղ ունի. վասն զի չի ձգեր պարասրահն ու խաղասրահը երթար, ինչպէս կ'ընեն այս պարոններէ շատերը:

—Բայց Պ. Ֆուլեադ քիչ մը ծթած պարողներէն է, ըսաւ տիկին Վէսթլիս. յիսուննոց մը ըլլալու է:

—Օ, կը խաբուիք, սիրելիս, ես ապահով եմ որ Պ. Ֆուլեադ քառսուն և հինգ տարու կայ չիկայ:

—Աւելի կ'երեւայ:

—Ծուշուն է որ միշտ երիտասարդի դէմք ունի, ըսաւ տիկին Տիւգոնոյ: Մարդ չի կըրնար հաւտալ որ քառսուն վեց տարու է: Ծատ գեղեցիկ է և գեղեցիկ երեւնալու ճամբան աղէկ գիտէ:

—Դուք ձեր ամուսինը շատ գեղեցիկ կը գտնէք:

ՖՈԱՆԳՅՕՐԹՈՒԱԶ

ՏԵՆԻՁ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՐ

Սենյանք ֆրանգ 0,250,000

Ինքնաթ ագչեսի ֆրանգ 1,270,000

Մեղքերը գումարանի տէնիզ գազալարնա գարչը վարորդարտա վէ կէ-
միւրտէ երւքէնիլէն մալլերի, վէ քէզալիք բօսթա իտարէլէրինէ թէսլիմ
օլունան միւճէվէրաթ վէ եախօտ պանգնօթ էվրագը զաեթ էհվէնիեթ
վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր:

Պու ճիհէթլէ մէպալիդի քիւլլիեթի սիկուրթա իտէպիլմէք իշին իշպու
գումարանի էվրօրատա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումարանիալարըյա
պիլլէշմիշ տիր: Պունլարըն թէքմիլ սէրմանէ վէ ինթիեթաթ ագչեսի 100,
000,000 ֆրանգը կէհէր:

էքմիլ Թիւրքիա աճէնթէսի

ՀԱՄՊՈՒՐԿ ՄԻՒՆԻԽ ՊԻՐԼԵՇՄԻՇ

ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՐԸ

Սենյանք

Ֆրանգ 8,000,000

Ինքնաթ ագչեսի 1888 Յունիսէ գատար

Ֆրանգ 4,817,262

Սէնէվի իրատ 1888 Յունիսէ գատար

Ֆրանգ 10,069,700

Մեղքերը գումարանալար տէրօղիթօլար վէ խանէլէր վէ անլէր իշինաէ
պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զաեթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ,
թէէմինաթը գալիեթ թանթընտա օլարագ սիկուրթա իտէրլէր:

Իսթանպուլ աճէնթէսի

Իսթանպուլ, Պահէ-գարու, Եօրկիատիս խան ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Մալիմաթ.—Շիրքէթլէրիմիզին Տէրիսաատէթ պանքէրլէրի պուլունան
ներսէսեան Բէտէր վէ Մախտուժու էֆէնտիլէր հիսապը կէօրիւմիւշ, վէ
միւտիլիեթի ումուլիեթ թարաֆընտան թաստիգ օլունմուշ հէր կիւնա
գարար ու գիեանք թագմինէ թէմամիլլէ թալիմաթ ախգ իլլէմիլլէր տիր:

— 74 —

—Այո՛, տիկին, վասն զի շատ մը օրային
շահատակութիւններ ունի. իր մարմինը չարա-
չար կը գործածէ և անտես կ'ընէ իր կնիկը.
բայց ես անտես ըլլալու տարիքը չունիմ կար-
ծեմ:

Պ. Ֆուլիաթ.՝ զոր դեռ չներկայացնէինք
մեր ընթերցողաց՝ բարեձեւ անձ մըն էր, որ
քառսուն տարու մարդու մը երեւոյթն ունէր,
բայց դեռ յիսուն ալ չիկար:

Դէմքը բաւական սիրուն էր, բայց քիչ մը
միօրինակ. այերը մուկի աչերուն կը նմանէին:
Միշտ ժպիտ ունէր իր շրթանց վրայ և փաղա-
քուշ բառեր իր բերնին մէջ. Այսու հանդերձ,
շատ հազուադէպ էր որ չի յաջողեր կանանց
մօտ:

Սակայն այս պարոն՝ երսուն տարու ե-
ղած ժամանակ՝ յաջողած էր ուտելու լմըն-
ցնելու այն հարստութիւնը, զոր իրեն թողած
էր իր հայրը:

Այն ժամանակէն ի վեր, ինչպէս կ'ապրէր
նա, ահա ոմանք իրենք իրենց այս հարցումը
կ'ուղղէին. բայց պատասխանը չէին կրնար գրո-
նալ. ինչու որ ամենեւին արհեստ մը չէր գի-
տեր, և ամեն կերպ ասպարէզներ ընդգը-
կելէ ետեւ, իր ժամանակը ոչինչով կ'անցու-
նէր:

— 75 —

Այո տեսակ մարդիկ շատ կը գտնուին աշ-
խարհի վրայ: Միշտ լաւ հագուելով, լաւ շք-
ուելով, նոր ձեռնոցներ դնելով և հայելիիպէս
փայլուն կոշիկներ հագնելով, ներկայ կը գըտ-
նուին թատրոնաց ներկայացումներու, նուա-
գահանդէսներու, երեկոյթներու, տոնախմբ-
ութեանց և միշտ բարձր ձայնով խօսելու խը-
նամբ կը տանին, որպէս զի ուշադրութիւն գը-
րաւեն:

Այսպիսի կեանք վարողներ կասկածելի կը
լինին յաճախ. խաբեքայութեամբ կ'ապրին,
կըսեն ոմանք. ասկէ անկէ ստակ կը մուրան,
կըսեն այլք:

Միայն սա ճշմարիտ է, որ այդպիսիք ճշ-
մարիտ հայկատակներ են, որք իւրաքանչիւր
մարդու ճաշակը չողորթթելու միջոցները
կ'ուսումնասիրեն, շարունակ համակարծիք կ'ըլ-
լան ձեզ, և եթէ իրենց ելլաք բռէք թէ լուս-
նոյ մէջ ճամբորդութիւն մը ընելու միտք ու-
նիք, չեն վայրանիր պատասխանելու թէ ընտիր
գաղափար մը յղացած էք:

Պ. Ֆուլիաթ. միշտ կըսէր թէ Սակարանին
մէջ գործառնութիւններ կ'ընէ. արդարեւ ան-
դադար Սակարան կը յաճախէր, բայց կը կար-
ծուէր թէ ուրիշներու քսակին հետ կը խաղար:

Պ. Ֆուլիաթ, որ իր բոլոր հարստութիւնը